


ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՄԵՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2004թ. համազգային հարցում՝ Հայաստանում

Երևան - 2005



ՀՏԳ- 341.231.14
ԳՄԴ- 67.91
Ի 610

Ի 610 Ինչ գիտենք մենք մարդու իրավունքների մասին: 2004թ. համազգային հարցում՝ Հայաստանում: - Եր.: Անտարես, 2005: - 92 էջ:

Սույն հրատարակության մեջ զետեղված է 2004թ. հոկտեմբերին «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի կառույցի մասին հանրային իրազեկության բարձրացման ծրագրի» շրջանակներում Հայաստանում անցկացված համազգային հարցման արդյունքների զեկույցը: Հարցումը մշակվել և իրականացվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից: Հարցման արդյունքների հիման վրա վերոհիշյալ կենտրոնը պատրաստել է զեկույց:

Հրատարակությունն իրականացվել է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի կառույցի մասին հանրային իրազեկության բարձրացման ծրագրի» օժանդակությամբ, որը համատեղ իրականացնում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման ծրագիրը: Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդեռլանդների զարգացման համագործակցության նախարարի կողմից:

Ի $\frac{1207000000}{0130(01)-2005}$ 2005

ISBN 99941-32-93-8

Հայաստանի ամերիկյան համալսարանի
«Թուրփանջյան» հասարակական հետա-
զոտությունների կենտրոնի տնօրեն,
գիտությունների դոկտոր
Լուսիգ Հ. Դանիելյան

Հայաստանի ամերիկյան համալսարանի
«Թուրփանջյան» հասարակական հետա-
զոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատողներ
Նարինե Հակոբյան (մագիստրոս)
Անի Դավաթյան (մագիստրոս)

Արմեն Հայկյանց

Ծրագրի ազգային տնօրեն

Քրիստինա Հենչեն

ՄԱԶԾ մարդու իրավունքների ծրագրերի
ղեկավար

Թերեզա Խորոզյան

Ծրագրի համակարգող

ԳՄԴ- 67.91

© Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման ծրագիր
Երևան, Հայաստան, 2005թ.

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Ամփոփում	6
Մեթոդաբանություն	7
Հիմնական արդյունքները	8
Տեղեկատվության աղբյուրները մարդու իրավունքների մասին	8
Ի՞նչ անել մարդու իրավունքների խախտման դեպքերում	10
Մարդու իրավունքների գիտելիքի մակարդակը	11
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր	12
Մարդու իրավունքների ըմբռնումը	12
Վերաբերմունքը Հայաստանում մարդու իրավունքներին	13
Մարդու իրավունքների հետ կապված ամենակարևոր խնդիրը	14
Մարդու իրավունքների պաշտպանության կառույցները	14
Ազգային արժեքները	15
Գենդերը և մարդու իրավունքները	16
Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր պաշտպանությունը	16
Հայաստանում մարդու որոշակի իրավունքների պաշտպանությունը	17
Հայաստանում մարդու իրավունքների խախտումները	19
Մարդկանց թրաֆիկինգ	20
Հիմնական արդյունքների ամփոփում	20
Տեղեկատվության աղբյուրները	20
Գիտելիքի մակարդակը	21
Վերաբերմունքը Հայաստանում մարդու իրավունքներին	21
Իրավունքների խախտումը	22
Աղյուսակներ	23
Հավելված Ա. Խնդիրներ, որոնց կապակցությամբ կարելի է դիմել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին	44
Հավելված Բ. Խնդիրներ, որոնց դեպքում չպետք է դիմել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին	46

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ը շարունակում է մարդու իրավունքների պաշտպանությունը դասել առաջնահերթ խնդիրների շարքը: Ընդունված ճշմարտություն է, որ մարդու իրավունքների լիարժեք իրականացումը խաղաղության, անվտանգության, տնտեսական զարգացման և սոցիալական արդարության կարևոր նախապայման է: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՄԱԿ-ը, 1990-ական թվականներից սկսած, իր տարբեր ծրագրերի և աշխատանքների շրջանակներում անդրադառնում է մարդու իրավունքների խնդիրներին: ՄԱԿ-ի կողմից որդեգրված մոտեցումը՝ հիմնված իրավունքի վրա, համարվում է լավագույն միջոցը՝ «իրավագործելու մարդկանց, որպեսզի պաշտպանեն իրենց շահերը, կանխելու խտրականությունը և հասարակության որոշ շերտերի սոցիալական օտարումը, լուծելու պատասխանատվության պակասի խնդիրը, որը մեծապես խոչընդոտում է զարգացման գործընթացը»¹: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակն իր 2005-2009թթ. Ջարգացման աջակցության ծրագրի շրջանակներում, որը 2004 թ. նոյեմբերին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, վերստին ընդգծում է իր պատրաստակամությունը իրագործելու Հայաստանում ծրագրեր, որոնք կաջակցեն Հայաստանի կառավարությանը՝ որպես պարտավորություններ ստանձնած հիմնական կառույցի, ինչպես նաև պաշտպանելու և խթանելու Հայաստանի քաղաքացիների իրավունքները: Միավորված ազգերի կազմակերպության Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը մարդու իրավունքների ոլորտում իրականացնում է հինգ նոր ծրագրեր, որոնցից մեկը 2005 թվականին մեկնարկած «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի կառույցի մասին հանրային իրազեկության բարձրացման ծրագիրն» է: Այն իրականացվում է Հայաս-

տանի Հանրապետության Ազգային ժողովի հետ համատեղ² և միտված է մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը՝ բարձրացնելով հանրության իրազեկությունը մարդու իրավունքների հետ կապված հիմնախնդիրների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանի նորաստեղծ ինստիտուտի վերաբերյալ: Այս տեսանկյունից սկզբունքային է այն ըմբռնումը, որ մարդու իրավունքների իմացությամբ կարելի է կրճատել մարդու իրավունքների խախտումների թիվը, և հանրության իրազեկության բարձրացումը կարող է զգալիորեն նպաստել Հայաստանում կայուն ժողովրդավարություն կառուցելու գործընթացին:

«Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի կառույցի մասին հանրային իրազեկության բարձրացման ծրագրի» նպատակներից է իրականացնել մարդու իրավունքներին առնչվող մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության քարոզարշավ՝ օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները, ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները, գոյություն ունեցող հաստատությունները և ոչ կառավարական ցանցերը: Նման քարոզարշավի շնորհիվ հանրության և մասնագետների համար ավելի մատչելի և հասկանալի կդառնան մարդու իրավունքների միջազգային չափանիշները և պաշտպանության տեղական, ազգային և միջազգային մեխանիզմները: Կկիրառվեն ոչ ֆորմալ կրթության մոտեցումներ, կներգրավվեն գոյություն ունեցող հաստատությունները և ոչ կառավարական ցանցերը: Ինչպես և նախատեսված է ծրագրով, քարոզարշավ պետք է ծավալվի հասարակական կարծիքի հարցման արդյունքների հիման վրա, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել, թե ինչ մակարդակի վրա են երկրում մարդու իրավունքների գիտելիքները:

1. Մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակալարի բացման խոսքը «ՄԱԿ-ի բարեփոխումների գործընթացում մարդու իրավունքների վրա հենված մոտեցման ներդրումը» միջգերատեսչական երկրորդ աշխատանքային հանդիպման ընթացքում՝ կայացած ԱՄՆ-ում 2003թ. մայիսին:

2. «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի կառույցի մասին հանրային իրազեկության բարձրացման ծրագիրը» ֆինանսավորվում է Նիդեռլանդների զարգացման համագործակցության նախարարի կողմից:

Հասարակական կարծիքի հարցումը նախապատրաստվել է անցկացվել է 2004թ. աշնանը Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից: Հայաստանում այս աննախադեպ հարցման նպատակն էր գնահատել, թե հանրությունը որքանով է ընկալում մարդու իրավունքները, ինչ մակարդակի վրա են հանրության գիտելիքները մարդու իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև պարզել հայ հասարակության ըմբռնումները, մոտեցումները և վարքագիծը մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերի առնչությամբ: Հետազոտությունն անցկացվել է ՄԱԶԾ-ի երկու այլ՝ «Թրաֆիկինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին»³ և «Գենդերը և քաղաքականությունը»⁴ ծրագրերի ֆինանսական օժանդակությամբ:

«Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնը պատրաստել է գեկույց, որում ամփոփված են նշված հետազոտության արդյունքները՝ ըստ հետևյալ հիմնական բաժինների. 1) մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, 2) մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների մակարդակը, 3) մոտեցումները մարդու իրավունքների հիմնախնդիրներին:

Առաջին բաժնում հարցման արդյունքները բացահայտում են այն հիմնական աղբյուրները, որոնցից Հայաստանի հասարակությունը տեղեկատվություն է ստանում մարդու իրավունքների մասին: Մարդու իրավունքների և դրանց հիմնական առանձնահատկությունների ընկալման, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանի դերի և

գործառնությունների մասին տեղեկացվածության գնահատականները գետեղված են երկրորդ բաժնում: Չեկույցի վերջին բաժնում ներկայացվում են հայաստանյան հանրության մոտեցումներն այնպիսի հարցերում, ինչպիսիք են պետական կառույցների կողմից մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելը, մարդու իրավունքների հետ կապված լրջագույն հիմնախնդիրները Հայաստանում, մարդու իրավունքների պաշտպանության ընթացիկ վիճակը, հաճախակի խախտվող մարդու իրավունքների ցանկը և գենդերային խտրականությունը: Այս բաժնում նաև ներկայացված են հարցվողների պատասխաններն այն հարցին, թե որոնք են Հայաստանի քաղաքացիների համար ամենակարևոր ազգային արժեքները: Հարցման արդյունքների լրացուցիչ մանրամասներ կարելի է քաղել սույն հրատարակությանը կցված 32 աղյուսակներից և երկու հավելվածներից:

Հարցման արդյունքները կարևոր տեղեկություններ են մատուցում ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակին, որոնք կարող են նպաստել ուսուցման և իրազեկության բարձրացման միջոցառումների մշակմանը և իրականացմանը մարդու իրավունքների ոլորտում: Մենք այն համոզման ենք, որ Հայաստանի պատմության մեջ այս աննախադեպ համազգային հարցման արդյունքները օգտակար կլինեն նաև Հայաստանում մարդու իրավունքների ոլորտում կրթության ծրագրեր իրականացնող կազմակերպություններին, քաղաքականություն մշակողներին և ակադեմիական հաստատություններին: Հենց այդ նկատառումով էլ սույն հրատարակությամբ ընթերցողների լայն շրջաններին են ներկայացվում հարցման հիմնական արդյունքները:

3.«Թրաֆիկինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն կարողությունների ստեղծմանը և աջակցություն փոժողներին» ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համատեղ: Այս ծրագիրը ֆինանսավորվում է Նիդեռլանդների զարգացման համագործակցության նախարարի և Նորվեգիայի կառավարության կողմից:
4.«Գենդերը և քաղաքականությունը Հարավային Կովկասում» ծրագիրն իրականացվում է աշխարհի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ. Եվրոպայի միջազգային զարգացման գործակալության և ՄԱԶԾ-ի Հայաստանի գրասենյակի ֆինանսավորմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը նախաձեռնել են նոր ծրագիր մարդու իրավունքների ոլորտում: Այն կոչվում է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման ծրագիր» և նպատակ ունի նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը Հայաստանում, խթանել մարդու իրավունքները՝ ապահովելով հանրային իրազեկությունը մարդու իրավունքների հիմնական հարցերի, այդ թվում նաև մարդու իրավունքների պաշտպանի նորաստեղծ հաստատության վերաբերյալ: Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՀՀԿ) հետ՝ հանրային իրազեկման քարոզարշավի մշակման համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով հասարակական կարծիքի հետազոտություն անցկացնելու համար:

Հայաստանում առաջին անգամ մարդու իրավունքների մասին հանրապետության ամբողջ տարածքում իրականացված այս հարցման նպատակն է պարզել հասարակության՝ մարդու իրավունքների ըմբռնումն ու գիտելիքի մակարդակը և Հայաստանի հասարակության կարծիքը, վարքագիծը և վերաբերմունքը Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման առնչությամբ:

Հարցվածների մոտ 40 տոկոսն է միայն որոշ չափով բավարարված Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությամբ, և միայն 30 տոկոսն է բավարարված իր իրավունքների պաշտպանվածության աստիճանով: Գրեթե բոլոր հարցվածները կարծում են, որ Հայաստանում կան մարդու իրավունքների հետ կապված լուրջ խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն, և կառավարությունը պետք է փոխի իր մոտեցումը, այսինքն՝ Հայաստանում մարդու իրավունքները պետք է լինեն լուծման ենթակա խնդիրների ցանկի առաջնային տեղերում: Այն բոլոր կառույցները, ո-

րոնք թվարկված էին առանձին հարցում, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նույնիսկ բավարար գնահատական չեն ստացել: Ազգային ժողովը, դատարանը, կառավարությունը և ոստիկանությունն ստացել են ամենացածր գնահատականները: Ընդհանուր առմամբ հարցվածները տվել են պատասխաններ, որոնք ցույց են տալիս վառ արտահայտված վերաբերմունք:

Տասը հարցվածներից 4-ը նշել են, որ վերջին երկու տարիների ընթացքում խախտվել է իրենց կամ ընտանիքից որևէ մեկի աշխատանքի իրավունքը, 10 հարցվածներից 3-ը նշել են սոցիալական ապահովության իրավունքի խախտման մասին, և 10 հարցվածներից 2-ը նշել են առողջության պահպանման և ազատ ու արդար ընտրություններին մասնակցելու իրավունքների խախտման մասին:

Հետաքրքրության աստիճանը բարձր է. 10 հարցվածներից 7-ը նշել են, որ հետաքրքրված են Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր հարցերով: Հարցվածների 60 տոկոսի համար հեռուստատեսությունն է մարդու իրավունքների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը: Այդուհանդերձ այդ հարցվածների մեծ մասը չի կարողացել նշել հեռուստատեսությամբ վերջին անգամ լսած լուրը: Հարցվածների 40 տոկոսը չի կարողացել նշել, թե որտեղից ձեռք կրերի անհրաժեշտ տեղեկատվությունը իրենց իրավունքների մասին: Հարցվածների գրեթե կեսը նշել է, որ չգիտի, թե ուր դիմի, եթե, իր կարծիքով, խախտվեն կյանքի անձեռնմխելիության կամ ընտրական իրավունքները: Այնուհանդերձ հարցվածների գրեթե 70 տոկոսը կարծում է, որ իրազեկ է մարդու իրավունքներին:

Հարցվածներից քչերն են կարողացել ճիշտ անվանել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը կամ նշել այն անձի անունը, որը ղեկավարում է այն: Ավելին, այդ հարցվածների մոտ 40 տոկոսը նույնիսկ չի կարողացել նշել մարդու իրավունքների հետ կապված որևէ խնդիր, որը կարող է լուծել օմբուդսմենը: Հարցվածների մոտ 3 տոկոսն է միայն կարողացել նշել Մար-

դու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ որպես մարդու իրավունքները համատարած բոլորի համար ամրագրող պաշտոնական փաստաթուղթ: Չնայած գրեթե բոլոր հարցվածները կարծում են, որ կան որոշ իրավունքներ, որոնք երբևէ որևէ պատճառով չպետք է սահմանափակվեն կառավարությունների կողմից, հարցվածների գրեթե կեսը համոզված է, որ մարդիկ իրավունքներ ունեն

սակ այն հանգամանքի շնորհիվ, որ կառավարություններն են դրանք տալիս ժողովուրդներին: Հարցվածները դժվարացել են ճիշտ մատնանշել մարդու համընդհանուր ճանաչված իրավունքները: Այսպես, օրինակ, գրեթե բոլոր հարցվածները կարծում էին, որ ապահով ճանապարհներով երթևեկելը մարդու համընդհանուր ճանաչված իրավունք է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի 15-ից մինչև 75 տարեկան քաղաքացիների ներկայացուցչական ընտրանքը որոշելու համար ԹՀՀԿ-ն դիմել է ՀՀ վիճակագրական ազգային ծառայությանը՝ հետևյալ պարամետրերի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունն ստանալու համար. 1) բնակչության թիվը՝ մարզային կտրվածքով, 2) տասը մարզերից յուրաքանչյուրի բնակչության թիվը՝ գյուղական և քաղաքային բնակիչների կտրվածքով և 3) Երևանի բնակչության թիվը՝ ըստ տասներկու համայնքների: Տնային տնտեսություններն ընտրվել են Երևան քաղաքից և տասը մարզերից համամասնորեն՝ արտացոլելով ՀՀ վերջին մարդահամարի տվյալները: Յուրաքանչյուր մարզից հասարակ պատահական ընտրանքի միջոցով ընտրվել են մեկ քաղաք և մեկ գյուղ⁵: ԹՀՀԿ-ն տասը քաղաքներից յուրաքանչյուրի համար ՀՀ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնից ձեռք է բերել մանրամասն քարտեզներ⁶: Երևանի դեպքում օգտագործվել է քաղաքի քարտեզը, որում պատկերված են շենքերը՝ ըստ համայնքների: ԹՀՀԿ-ն դիմել է տասը մարզային քաղաքներին և Երևանի տասներկու համայնքներին՝ որոշելու համար բազմաբնակարան շենքերի և սեփական առանձնատների համամասնությունը: Մարզային յուրաքանչյուր քաղաքի և Երևանի յուրաքանչյուր համայնքի համար օգտագործվել են քարտեզներ՝ պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտ-

րանքի միջոցով շենքերն ընտրելու համար: Տասը քաղաքներում և Երևանում՝ արդեն տեղում, յուրաքանչյուր բազմաբնակարան շենքից հասարակ պատահական ընտրանքի միջոցով ընտրվել է մեկ տնային տնտեսություն: ԹՀՀԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտրանքի միջոցով: Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են պատահականորեն: Աղյուսակներ 1, 2 և 3-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ մարզային կտրվածքով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը:

ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը ԹՀՀԿ-ին տրամադրել է ծրագրի կողմից պահանջվող տեղեկատվության ցանկ, և ԹՀՀԿ-ն մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթիկ: Չափորոշիչներ մշակելիս ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը և ԹՀՀԿ-ն փորձել են գտնել մարդու իրավունքների ոլորտում անցկացված համապատասխան հարցումներ, որոնք ունենան վստահելի և ճշգրիտ չափորոշիչներ:

Մի քանի չափորոշիչներ փոխ են առնվել 2001-ին և 2002-ին Լիտվայում մարդու իրավունքների ոլորտում անցկացված երկու հարցումներից, ինչպես նաև 1997-ին Միացյալ

5. Այս ուսումնասիրության ընտրանքային նպատակներից ելնելով՝ 1,000-ից քիչ բնակչություն ունեցող քաղաքները համարվել են գյուղեր:

6. Դրանք ի սկզբանե պարբերաբարվել են ՀՀ 2001-ի մարդահամարի համար:

Նահանգներում մարդու իրավունքների ոլորտում անցկացված հարցումից⁷: Հարցաթերթիկը փորձարկվել է Երևանում և մեկ գյուղում (ոչ ընտրանքից), և արվել են համապատասխան շտկումներ: Ընդհանուր հաշվով հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 30-ը անց է

կացվել 1005 հարցազրույց⁸: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս բաժինն ամփոփում է հարցման արդյունքները և բաղկացած է երեք ենթաբաժիններից. տեղեկատվության աղբյուրները մարդու իրավունքների մասին, գիտելիքի մակարդակը մարդու իրավունքների մասին և վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ:

Հարցվածների միջին տարիքը 43 է (տե՛ս Աղյուսակ 30), հարցվածների 37 տոկոսը տղամարդիկ են, 63 տոկոսը՝ կանայք (տե՛ս Աղյուսակ 29, սեռային համամասնությունները

ընդունել են՝ անկախ բնակության վայրից, լինի Երևանում, մարզերում, քաղաքային թե գյուղական բնակավայրերում): Հարցվածների 33 տոկոսը ավարտել է 10-ամյա միջնակարգ դպրոց, 57 տոկոսը հաճախել է կամ ավարտել է համալսարան, քոլեջ/ուսումնարան կամ տեխնիկում (տե՛ս Աղյուսակ 31): Տնային տնտեսությունների 62 տոկոսն ունեցել է զոնե մեկ անդամ, որն աշխատում է ամբողջ կամ կես դրույքով, ներառյալ ինքնագրավածությունը (տե՛ս Աղյուսակ 32):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցվածներին բաց հարց է տրվել. «Նշեք մեկ կարևորագույն աղբյուր, որից դուք տեղեկություններ եք ստանում մարդու իրավունքների մասին»: Հարցվածների 20 տոկոսը չի կարողացել նշել մարդու իրավունքների մասին տեղեկատվության որևէ աղբյուր, և այդպիսիների տեսակարար կշիռը գյուղական վայրերում ավելի մեծ է եղել (24 տոկոս), քան քաղաքային բնակիչների շրջանում (18 տոկոս): Հարցվածների 64 տոկոսը նշել է, որ տեղեկատվություն է ստանում հեռուստատեսությունից (տե՛ս Աղյուսակ 5 և


գծապատկեր Ա): Միայն երեք հարցվածներ են նշել հասարակական կազմակերպություններ (ՀԿ): Հեռուստատեսությունից տեղեկատվություն ստացող քաղաքային (64 տոկոս) և գյուղական բնակիչների (63 տոկոս, տե՛ս Աղյուսակ 6) տեսակարար կշիռը գրեթե նույնն է եղել: Շատ քիչ հարցվածներ են նշել թերթերը (4 տոկոս) կամ ռադիոն (2 տոկոս)՝ որպես մարդու իրավունքների մասին տեղեկատվության աղբյուր, ընդ որում ավելի շատ Երևանի, քան Երևանից դուրս ապրող բնակիչներ են նշել, որ տեղեկատվությունն ստանում են թերթերից:

7. Տե՛ս Շուկայի և կարծիքի հետազոտության կենտրոն «Վիճակագրություն» ՄՊԸ (2002). «Մարդու իրավունքները Լիբիայում, 2002 թվական: Բնակչության ներկայացուցչական հարցում»: Վիճակագրություն (Լիբիա), ՄԱԶԾ-ի Մարդու իրավունքների գործողությունների պլանի ծրագիր: Շուկայի և կարծիքի հետազոտության կենտրոն «Վիճակագրություն» ՄՊԸ (2001). «Մարդու իրավունքները Լիբիայում, 2001 թվական: Բնակչության ներկայացուցչական հարցում»: Վիճակագրություն (Լիբիա), ՄԱԶԾ-ի Մարդու իրավունքների գործողությունների պլանի ծրագիր:

Փրփեր Գ., Հարթ հետազոտությունների կենտրոն (1997). «Մեծահասակների վերջնական հարցման փուլայինները»: Մեկտեմբեր 14, 2004, (<http://www1.umn.edu/humanrts/edumat/adultsur.htm>):

8. 76 տարեկան մի կին, որը մենակ է ապրում, ընդգրկվել է ընկերակազմի մեջ. թեև նախատեսված ամենաբարձր տարիքը 75 տարեկանն էր: Մերժման փուլում 14.8 է:


Գծապատկեր Ա. Մարդու իրավունքների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը



Այն հարցվածները, ովքեր նշել են, որ մարդու իրավունքների մասին տեղեկատվություն ստանում են հեռուստատեսությունից, ավելի հաճախ նշել են ՀՀ հանրային հեռուստատալիքը՝ Հ1-ը (51 տոկոս, տես Աղյուսակ 7 և Գծապատկեր Բ): Երևանի և մարզերի բնակիչների պատասխանները համեմատելիս

պարզվել է, որ Հ1-ը դիտող բնակիչները մարզերում գրեթե երկու անգամ ավելի շատ են (39 տոկոս), քան Երևանում (21 տոկոս): Մարդու իրավունքների մասին լուրեր ստանալու համար ԱԼՄ-ն գրեթե երկու անգամ ավելի շատ են դիտում գյուղական (11 տոկոս), քան քաղաքային բնակիչները (6 տոկոս):


Գծապատկեր Բ. Մարդու իրավունքների մասին տեղեկատվություն մատուցող հեռուստալիքները



Տեղեկատվության աղբյուրի մասին պատասխանների ճշգրտությունն ստուգելու համար լրացուցիչ հարց է տրվել նշված հեռուստալիքով վերջին անգամ լսած լուրի մասին: Այն հարցվածների 67 տոկոսը, ովքեր նշել են, որ մարդու իրավունքների մասին լուրերն ստանում են հեռուստատեսությունից, չի

կարողացել նշել հեռուստատեսությամբ վերջին անգամ լսած լուրը: Այս արդյունքը ցույց է տալիս, որ հարցվածները հազիվ թե հեռուստատեսությունից մարդու իրավունքների մասին տեղեկատվություն են ստանում այն ծավալով ու հաճախականությամբ, որ նշում են:

Գծապատկեր Գ. Մարդու իրավունքների մասին տեղեկատվության աղբյուրները



Առանձին հարց է տրվել այն մասին, թե եթե տեղեկատվություն անհրաժեշտ լինի իրենց իրավունքների մասին, ապա որտեղից ձեռք կբերեն այն (տե՛ս Աղյուսակ 8 և Գծապատկեր Գ): Հարցվածների 26 տոկոսը պատասխանել է, որ չգիտի, թե որտեղից ձեռք բերի այն, իսկ 14 տոկոսը պատասխանել է՝ ոչ մի տեղից: 22 տոկոսը նշել է, որ տվյալ տեղեկատվությունը ձեռք կբերի իրավաբանից կամ դատարանից, 13 տոկոսը՝ զանգվածային

լրատվամիջոցներից, 8 տոկոսը՝ ընկերներից և բարեկամներից, և 9 տոկոսը՝ պետական պաշտոնյաներից: Շատ ավելի Երևանի բնակիչներ (29 տոկոս), քան մարզերի բնակիչներ են (18 տոկոս) նշել, որ կղիմեն իրավաբանի կամ դատարան մասն տեղեկատվության համար, մինչդեռ ավելի շատ մարզերի բնակիչներ (12 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (2 տոկոս) նշել, որ կղիմեն պետական կառույցներ (տե՛ս Աղյուսակ 9):

Ի՞նչ անել մարդու իրավունքների խախտման դեպքերում

Երեք առանձին բաց հարցերի շարք է տրվել այն մասին, թե ուր կղիմի հարցվածը, եթե խախտվի իր կամ իր ընտանիքից որևէ մեկի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը և ընտրությունների ժամանակ քվեարկելու իրավունքը (տե՛ս Աղյուսակներ 10, 11 և 12):

Հարցվածների 45 տոկոսը նշել է, որ ոչ մի տեղ չի դիմի կամ չգիտի, թե ուր դիմել, եթե, իր կարծիքով, խախտվի իր կամ ընտանիքից որևէ մեկի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: 21 տոկոսը նշել է, որ կղիմի դատարան կամ իրավաբանի, 18 տոկոսը՝ ոստիկանություն, և 10 տոկոսը՝ պետական պաշտոնյաներին: Միայն մոտ 3 տոկոսն է նշել, որ կղիմի մարդու իրավունքների պաշտպանին: Ավելի շատ քաղաքային (22 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (12 տոկոս) նշել, որ կղիմեն ոստիկանություն:

Նմանապես ավելի շատ քաղաքային (23 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (17 տոկոս) նշել, որ կղիմեն իրավաբանի կամ դատարան:

Հարցվածների գրեթե 70 տոկոսը նշել է, որ չգիտի ուր դիմել կամ ոչ մի տեղ չի դիմի, եթե խախտվի կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը: Մոտ 14 տոկոսը նշել է, որ կղիմի պետական պաշտոնյաներին, իսկ 9 տոկոսը նշել է, որ կօգտվի դատարանի կամ իրավաբանի ծառայություններից:

Հարցվածների 45 տոկոսը պատասխանել է, որ չի կարող նշել, թե ուր կղիմի, եթե խախտվեն ընտրական իրավունքները, 23 տոկոսը նշել է, որ կղիմի ընտրական հանձնաժողով, 18 տոկոսը՝ դատարան կամ իրավաբանի, և 10 տոկոսը՝ պետական պաշտոնյաներին: Շատ ավելի քաղաքային (22 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (11 տո-

կոս) նշել, որ իրենք կդիմեն իրավաբանի կամ դատարան:

Հարցվածներին խնդրել են գնահատել, թե որքանով են իրենք լավատեղյակ Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակին, և 68 տոկոսը նշել է, որ առնվազն «որոշ չափով տեղյակ է» (տե՛ս Աղյուսակ 19): Վիճա-

կագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ գոյություն չունեն քաղաքային և գյուղական բնակիչների, Երևանի և մարզերի բնակիչների, ինչպես նաև տղամարդկանց և կանանց միջև: Չկա նաև համահարաբերակցություն (կոռելացիա) տարիքային տարբերությունների հիման վրա:

Մարդու իրավունքների գիտելիքի մակարդակը

Մարդու իրավունքների գիտելիքի մակարդակը պարզելու համար հարցվածներին տրվել են մի քանի հարցեր: Առաջին հարցերն առնչվում էին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին: Հարցվածների 16 տոկոսը կարողացել է ճիշտ նշել տիկին Լարիսա Ալավերդյանի անունը, որը նշանակվել է ղեկավարելու այդ գրասենյակը, և 16 տոկոսը կարողացել է ճիշտ նշել նրա պաշտոնը (տե՛ս Աղյուսակներ 13 և 14, ճիշտ պատասխաններ էին համարվում՝ «օմբուդսմեն» կամ «մարդու իրավունքների պաշտպան»): Այդ հարցերին ճիշտ պատասխաններ տված հարցվածների 95 տոկոսը երկու հարցերին էլ ճիշտ է պատասխանել:

Նշանակալի տարբերություն է նկատվել տղամարդկանց և կանանց կողմից տրված պատասխանների մեջ. տղամարդկանց 26 տոկոսը և կանանց 10 տոկոսն են կարողացել ճիշտ նշել տիկին Ալավերդյանի անունը: Օմբուդսմենի կամ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը ճիշտ նշողների մեջ տղամարդիկ ավելի մեծ թիվ են կազմում (26 տոկոս), քան կանայք (11 տոկոս): Ավելին, տիկին Ալավերդյանի անունը ճիշտ նշողների շարքում Երևանի հարցվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (23 տոկոս), քան մարզերինը (13 տոկոս), և քաղաքային հարցվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (19 տոկոս), քան գյուղական բնակավայրերինը (10 տոկոս): Նմանապես նրա պաշտոնը ճիշտ նշողների թվում Երևանի հարցվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (23 տոկոս), քան մարզերի հարցվածների (13 տոկոս), և քաղաքային հարցվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (20 տոկոս), քան գյուղական բնակավայրերի (10 տոկոս):

Այն 188 հարցվածներին, ովքեր ճիշտ են

նշել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի անունը կամ պաշտոնը, խնդրել են նշել այնպիսի խնդրի օրինակ, որի կապակցությամբ քաղաքացիները կարող են դիմել մարդու իրավունքների պաշտպանին, և մեկ այլ խնդրի օրինակ, որի դեպքում չպետք է դիմել մարդու իրավունքների պաշտպանին (պատասխանների ամբողջ ցանկը ներկայացված է Ա և Բ հավելվածներում): Այդ 188 հարցվածների 36 տոկոսը չի կարողացել նշել որևէ խնդիր, որը մարդու իրավունքների պաշտպանը կարող է լուծել: Տրված պատասխաններից շատերը կարելի է համարել այդ հաստատության լիազորություններից դուրս: Պատասխաններն առնչվում են բազմաթիվ խնդիրների և հարցերի, ներառյալ աշխատանքի և սեփականության իրավունքների հարցերը, դատարանի հետ կապված, փախստականների, կառավարության հետ կապված խնդիրները և իշխանության բռնի գավթումը:

Հարցվածների 49 տոկոսը չի կարողացել նշել որևէ խնդիր, որի առնչությամբ չպետք է դիմել մարդու իրավունքների պաշտպանին: Հարցվածների մոտ 25 տոկոսը նշել է ընտանեկան կամ անձնական խնդիրներ, իսկ 6 տոկոսը նշել է, որ որևէ հանցանքի համար մեղավոր ճանաչված անձինք չպետք է դիմեն մարդու իրավունքների պաշտպանին: Պատասխանները ներառում են բացահայտ թյուր պատկերացումներ մարդու իրավունքների պաշտպանի դերի վերաբերյալ, օրինակ՝ նշել են, որ ընտրությունների և ընտրական իրավունքների, աշխատանքի, ոստիկանության, կրոնական աղանդների խնդիրների առնչությամբ, չի կարելի դիմել Մարդու իրավունքների պաշտպանին:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Հարցերի առանձին շարքի օգնությամբ փորձ է արվել պարզել հարցվածների գիտելիքը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մասին: Այդ հարցերից առաջինը ձևակերպված էր այսպես. «Այնքանով, որքանով Գ-ուք տեղյակ եք, ասացեք խնդրեմ, կա՞րդյոք որևէ պաշտոնական փաստաթուղթ, որում ամրագրված են մարդու իրավունքները համատարած բոլորի համար» (տե՛ս Աղյուսակ-

ներ 27ա-27գ): 27 տոկոսը նշել է, որ գիտի մնացած փաստաթղթի գոյության մասին, մինչդեռ 1005 հարցվածներից միայն 27-ն են (3 տոկոս) կարողացել ճիշտ անվանել հռչակագիրը: Հռչակագրի անվանումը ճիշտ չնշած 978 հարցվածների 35 տոկոսը պատասխանել է, որ մինչև հարցազրույցը լսել է այդ փաստաթղթի մասին:

Մարդու իրավունքների ըմբռնումը

Հարցվածներին տրվել է 16 իրավունքներից բաղկացած ցանկ, և նրանք պետք է նշեին, թե դրանցից որոնք են համընդհանուր ճանաչված մարդու իրավունքներ և պետք է ամենուրեք երաշխավորվեն բոլոր մարդկանց համար: Երկու իրավունքներ, որոնք մարդու իրավունքներ չեն, նույնպես ընդգրկվել էին այդ ցանկում, և գիտելիքը պարզելու համար «չգիտեմ» պատասխանն առանձնացվել էր «չեմ հասկանում» պատասխանից (տե՛ս Աղյուսակ 18): Ընդհանուր առմամբ հարցվածները

նշել են, որ ցանկի բոլոր իրավունքները մարդու իրավունքներ են. ամենից քիչ «այո» պատասխան ստացել է կրոնի ազատությունը (70 տոկոս), և ամենից շատ «այո» պատասխան ստացել է երեխաների իրավունքների պաշտպանությունը (98 տոկոս): Հարցվածները սխալ են նշել, որ «սպառողների իրավունքները» (82 տոկոս) և «ապահով ճանապարհներով երթևեկելու իրավունքը» (96 տոկոս) համընդհանուր ճանաչված մարդու իրավունքներ են (տե՛ս Գծապատկեր Գ):

Գծապատկեր Գ. «Այո» պատասխանները հեղինակ հարցին. «Ասացեք խնդրեմ, արդյոք նշած յուրաքանչյուր փարբերակ համընդհանուր ճանաչված մարդու իրավունք է, որը պետք է երաշխավորվի ամենուրեք բոլոր մարդկանց համար»:




Առանձին հարցերի դեպքում հարցվածները ճիշտ պատասխան են տվել՝ համաձայնելով, որ մարդու իրավունքները պետք է երաշխավորված լինեն աշխարհի բոլոր մարդկանց համար՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ են նրանք ապրում (98 տոկոս), որ կան որոշ իրավունքներ, որոնք երբեք որևէ պատճառով չպետք է սահմանափակվեն կառավարությունների կողմից (91 տոկոս), և մենք ունենք մարդու իրավունքներ, որովհետև դրանք բնական իրավունքներ են և պատկանում են բոլոր մարդկային էակներին (96 տոկոս) (տե՛ս Աղյուսակներ 22բ, 22գ, 22ե և 23, ինչպես նաև Գծապատկեր Ե):

Այնուհանդերձ հարցվածների ավելի քան կեսը (52 տոկոս) համաձայնել է հետևյալ ձևակերպումներին, որոնք չեն համարվում ճիշտ պատասխաններ. «Մենք ունենք մարդու իրավունքներ միայն այն հանգամանքի շնորհիվ, որ դրանք մեզ տալիս են կառավարությունները» (տե՛ս Աղյուսակ 22դ): Հարցվածներ

րի միայն 56 տոկոսն է ճիշտ պատասխան տվել՝ համաձայնելով, որ Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է աշխատանքի, կրթության և առողջության պահպանման իրավունքները (տե՛ս Աղյուսակ 22գ): Որոշ չափով տղամարդիկ ավելի են հակված ճիշտ պատասխանի, քան կանայք. ավելի մեծ թվով տղամարդիկ չեն համաձայնել, որ մենք ունենք մարդու իրավունքներ սուկ այն հանգամանքի շնորհիվ, որ դրանք մեզ տալիս են կառավարությունները, նույնպես և Երևանի ու քաղաքային բնակիչներն են ավելի ճիշտ պատասխանել, քան մարզերի և գյուղական բնակիչները, չհամաձայնելով այդ ձևակերպմանը: Որոշ չափով կանայք տղամարդկանցից ավելի լավատեղյակ էին, որ Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է աշխատանքի, կրթության և առողջության պահպանման իրավունքները, ինչպես նաև մարզերի և գյուղական բնակիչները⁹:

Գծապատկեր Ե. «Այո» պատասխանները մարդու իրավունքների գիտելիքն ստուգող հարցերին



Վերաբերմունքը Հայաստանում մարդու իրավունքներին

Հարցվածների 71 տոկոսը նշել է, որ հետաքրքրված է Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր հարցերով. միջին թիվը 2.3 է 1-ից մինչև 4 սանդղակում, որտեղ 1-ը նշանակում է «շատ հետաքրքրված է», իսկ 4-

ը՝ «բոլորովին հետաքրքրված չէ» (տե՛ս Աղյուսակ 4): Վիճակագրական տեսանկյունից որևէ նշանակալի տարբերություն չի բացահայտվել տղամարդկանց և կանանց, քաղաքային և գյուղական, Երևանի և տասը մար-

9. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

գերի բնակիչների միջև:

Հարցվածների 39 տոկոսը նշել է, որ առնվազն «որոշ չափով բավարարված է» Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությամբ (տե՛ս Աղյուսակ 20): Մոտ 45 տոկոսը նշել է, որ «բնավ բավարարված չէ» Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությամբ: Առկա է թույլ դրական

համահարաբերակցություն (կոռելացիա) տարիքի և այդ բավարարվածության միջև. որոշ չափով տարեց հարցվածներն ավելի են բավարարված¹⁰: Որոշ չափով տղամարդիկ ավելի քիչ են բավարարված, քան կանայք¹¹, և Երևանի հարցվածներն ավելի քիչ են բավարարված, քան մարզերի հարցվածները¹²:

Մարդու իրավունքների հետ կապված ամենակարևոր խնդիրը

Հարցվածներին խնդրել են պատասխանել հետևյալ բաց հարցին. «Ո՞րն է այսօր Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված մեկ ամենակարևոր խնդիրը»: Տրված պատասխանները դասակարգվել են հինգ խմբի (տե՛ս Աղյուսակ 15): Հարցվածների 23 տոկոսը չի կարողացել նշել Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված որևէ խնդիր: 24 տոկոսը նշել է մարդու որոշակի իրավունքների խախտում, ինչպիսիք են երեխաների իրավունքները, զինձառայողնե-

րի իրավունքները և աշխատանքի իրավունքը: 18 տոկոսը նշել է սոցիալական անարդարությունը կամ տնտեսական խնդիրները, 15 տոկոսը պատասխանել է, որ Հայաստանում մարդու իրավունքները ընդհանուր առմամբ պաշտպանված չեն, 6 տոկոսը պատասխանել է, որ խախտվել է անձնական անձեռնմխելիության իրավունքը, և 5 տոկոսը նշել է օրենքի գերակայության հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանության կառույցները

Հարցվածներին խնդրել են 1-ից մինչև 5 սանդղակի օգնությամբ, որտեղ «1»-ը նվազագույն գնահատականն է, իսկ «5»-ը՝ առավելագույն, գնահատել Հայաստանի տարբեր կառույցների աջակցությունը մարդու իրավունքների պաշտպանության գործին: Ոչ մի կառույց 3-ից ավելի բարձր միջին գնահատական չի ստացել: Ամենացածր միջին գնահատականները տրվել են Ազգային ժողովին (2.0), կենտրոնական կառավարությանը (2.1), դատարանին (2.2), ոստիկանությանը (2.3), տեղական ինքնակառավարման մարմիններին (2.5), հասարակական կազմա-


կերպություններին (2.6) և ՀՀ նախագահին (2.6): Կարևոր է նաև նշել, որ մեծ թվով հարցվածներ չեն կարողացել գնահատական տալ մարդու իրավունքների պաշտպանին (36 տոկոս) կամ հասարակական կազմակերպություններին (18 տոկոս): Գնահատական տված հարցվածների մոտ 25 տոկոսը նվազագույն գնահատական է տվել մարդու իրավունքների պաշտպանին, և 36 տոկոսը՝ բավարարից ցածր գնահատական հասարակական կազմակերպություններին (տե՛ս Աղյուսակներ 16ա-17 և Գծապատկեր 2):

10. Պիրսոնի կորելացիոն վերլուծությունը հավասար է 0.128, նշանակալիության 0.000 մակարդակում:

11. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քիսքը՝ նշանակալիությունը՝ 0.014 մակարդակում:

12. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քիսքը՝ նշանակալիությունը՝ 0.004 մակարդակում:

Գծապատկեր 2. Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության կառույցների գնահատականները 1-ից մինչև 5 սանդղակում



Չնայած բոլոր կառույցներն ստացել են ցածր գնահատականներ, վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ կան դատարանին, ոստիկանությանը, Ազգային ժողովին և տեղական ինքնակառավարման մարմիններին քաղաքային և գյուղական բնակիչների կողմից տրված գնահատականների միջև. քաղաքային բնակիչները տվել են ավելի ցածր գնահատականներ¹³: Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ կան նաև Երևանի և մարզերի բնակիչների կողմից կառույցներին տրված գնահատականների միջև, բացառությամբ ՀԿ-ների, որոնց Երևանի բնակիչները տվել են ավելի ցածր գնահատական: Վի-

ճակագրական տեսանկյունից թույլ բացասական համահարաբերակցություններ (կոռելացիաներ) կան տարիքի և բոլոր կառույցներին տրված գնահատականների միջև. երիտասարդ հարցվածները տվել են ավելի ցածր գնահատականներ, քան տարեց հարցվածները¹⁴: Վիճակագրական տեսանկյունից նաև նշանակալի տարբերություններ գոյություն ունեն տղամարդկանց և կանանց կողմից բոլոր կառույցներին տրված գնահատականների միջև, բացառությամբ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց տղամարդիկ տվել են ավելի ցածր գնահատականներ:

Ազգային արժեքները

Հարցվածներին խնդրել են նշել, թե որոնք են իրենց համար ամենակարևոր ազգային արժեքները: Այս ցուցանիշը փոխառնված է ԱՄՆ-ում 1997-ին անցկացված հարցումից (տե՛ս Աղյուսակներ 21ա և 21բ): Հարցվածների 21 տոկոսը տվել է մշակույթին, արվեստին, լեզվին, ճարտարապետությանն առնչվող պատասխաններ, 15 տոկոսը նշել է հայրենա-

սիրությունը, և 9 տոկոսը նշել է կրոնը: Հարցվածների 20 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին: Նրանք նաև տարբեր «այլ» պատասխաններ են տվել, որոնք ներառում են ամեն ինչ՝ սկսած ստեղծագործական ձիրքից և վերջացրած հայկական հյուրասիրությամբ:

13. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քետար՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

14. Պիրսոնի կոռելացիոն վերլուծությամբ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.01 մակարդակից ցածր:

Գեները և մարդու իրավունքները

Գրեթե նույն թվով հարցվածներ համաձայնել և չեն համաձայնել հետևյալ ձևակերպմանը. «Սեռային դիսկրիմինացիան (խտրականությունը) խնդիր չէ Հայաստանում» (36-ական տոկոս): Բավական մեծ թիվ կազմող հարցվածներ (28 տոկոս) չեն կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակ 22ա և Գծապատկեր Է): Ուշագրավ է, որ այդ հարցին ամենից շատ չեն կարողացել պատասխանել քաղաքային բնակավայրերում ապրող կանայք: Գյուղական բնակավայրերում այդ հարցին չեն կարողացել պատասխանել նույն թվով տղամարդիկ և կանայք (31 տոկոս), մինչդեռ քաղաքային բնա-

կավայրերում այդ հարցին չի կարողացել պատասխանել տղամարդկանց 21 տոկոսը, կանանց՝ 30 տոկոսը: Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել տղամարդկանց և կանանց, Երևանում ու մարզերում ապրող բնակիչների և գյուղական ու քաղաքային բնակիչների միջև:

Սակայն թույլ բացասական համահարաբերակցություն (կոռելացիա) գոյություն ունի տարիքի դեպքում. ավելի շատ երիտասարդ հարցվածներ, քան տարեցներ, համաձայն չեն այն մտքին, որ խտրականությունն՝ ըստ սեռի, խնդիր չէ Հայաստանում¹⁵:

Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր պաշտպանությունը

Հարցվածների մոտ 40 տոկոսը համաձայնել է այն ձևակերպմանը, որ ընդհանուր առմամբ Հայաստանի քաղաքացիների իրավունքներն այսօր ավելի լավ են պաշտպանված, քան երբևէ անցյալում (տե՛ս Աղյուսակ 22է), մինչդեռ հարցվածների 20 տոկոսը բնավ համաձայն չէ այդ մտքին: Որոշ չափով տղամարդիկ ավելի հակված են չհամաձայնելու այդ ձևակերպմանը, քան կանայք¹⁶, և տարեց հարցվածներն ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան երիտասարդ հարցվածները¹⁷: Ավելին, գյուղական և մարզերի բնակիչները ինչ-որ չափով ավելի հակված են չհամաձայնելու այդ ձևակերպմանը, քան քաղաքային և Երևանի բնակիչները¹⁸:

Հարցվածների 32 տոկոսը համաձայնել է հետևյալ ձևակերպմանը. «Ընդհանրապես ես բավարարված եմ իմ իրավունքների պաշտպանությամբ», և 33 տոկոսը բոլորովին համաձայն չէ այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 22ժզ):

Գրեթե բոլոր հարցվածները (96 տոկոս) համաձայնել են, որ առհասարակ Հայաստանում կան մարդու իրավունքների հետ կապված լուրջ խնդիրներ, որոնք դեռևս չեն լուծվել (տե՛ս Աղյուսակ 22ը), և հարցվածների կեսը նշել է, որ միանգամայն համաձայն է այդ ձևակերպմանը: 84 տոկոսը համաձայնել է, որ մարդու իրավունքները Հայաստանում շարունակ խախտվում են (տե՛ս Աղյուսակ 22ժա), և հարցվածների 40 տոկոսը միանգամայն համաձայն է: Եվ դարձյալ գրեթե բոլոր հարցվածները (98 տոկոս) համաձայնել են, որ Հայաստանի կառավարությունը պետք է փոխի իր մոտեցումը, այսինքն՝ Հայաստանում մարդու իրավունքները պետք է լինեն լուծման ենթակա խնդիրների շարքի առաջնային տեղերում, և հարցվածների 61 տոկոսը լիովին համաձայնել է այդ կարծիքին (տե՛ս Աղյուսակ 22ժբ):

Հարցվածների 47 տոկոսը, համեմատելով նախկին Խորհրդային Միության երկու

15. Պիրսոնի կոռելացիոն վերլուծությունը հավասար է -0.111, նշանակալիության 0.003 մակարդակում:

16. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քեստը՝ նշանակալիությունը՝ 0.002 մակարդակում:

17. Պիրսոնի կոռելացիոն վերլուծությունը հավասար է 0.189 նշանակալիության 0.000 մակարդակում:


18. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քեստը՝

նշանակալիությունը՝ 0.01 մակարդակում:

հարևան երկրների հետ, համարում է, որ Հայաստանում մարդու իրավունքներն ավելի լավ են պաշտպանվում, քան Ադրբեջանում (բավական մեծ թվով հարցվածներ՝ 44 տոկոս, չեն կարողացել պատասխանել այդ հարցին), և 48 տոկոսը համարում է, որ Հայաստանում

մարդու իրավունքներն ավելի լավ են պաշտպանվում, քան Վրաստանում (բավական մեծ թվով հարցվածներ՝ 41 տոկոս, չեն կարողացել պատասխանել այդ հարցին) (տե՛ս Աղյուսակներ 22թ և 22ժ):

Գծապատկեր Է. Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկումների համաչափողների տոկոսները



Հայաստանում մարդու որոշակի իրավունքների պաշտպանությունը

Հարցվածների համար թվարկել են մարդու իրավունքներ և խնդրել են գնահատել 1-ից մինչև 10 սանդղակի օգնությամբ (որտեղ 1-ը «բնավ պաշտպանված չէ», իսկ 10-ը «միշտ պաշտպանված է»), թե որքանով է յուրաքանչյուր իրավունք պաշտպանված Հայաստանում (տե՛ս Աղյուսակներ 24ա-24ժդ, 25):

Միջին գնահատականները բոլոր 14 իրավունքների համար նվազման կարգով ներկայացված են Գծապատկեր Ը-ում: Ամենաքիչ պաշտպանված իրավունքները, ըստ հարցվածների, սոցիալական սպահովությունն է (միջին գնահատականը 3.2 է 1-ից մինչև 10 սանդղակում), աշխատելու իրավունքը (3.4), պետության կառավարման գործին մասնակցելու իրավունքը (3.5), արդար դատաքննության իրավունքը (3.5) և առողջության պահպանման իրավունքը (3.8): Կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը


(4.2), կալանավորվածների և ձերբակալվածների իրավունքները (4.4) և ազատ ու արդար ընտրություններին մասնակցելու իրավունքը (4.8) նույնպես ստացել են ցածր գնահատականներ: Կարևոր է նշել, որ մեծ թվով հարցվածներ չեն կարողացել գնահատել, թե որքանով են Հայաստանում պաշտպանված կալանավորվածների և ձերբակալվածների իրավունքները (31 տոկոս), պետության կառավարման գործին մասնակցելու իրավունքը (20 տոկոս), կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը (14 տոկոս) և արդար դատաքննության իրավունքը (12 տոկոս):

Հարցվածներն ամենաբարձր գնահատականները տվել են կրոնի ազատության իրավունքի (8.1), այնուհետև ազատ տեղաշարժման իրավունքի (6.5), տղամարդկանց և կանանց իրավահավասարության (6.4), ըն-

տանեկան բռնություններից երեխաների պաշտպանության իրավունքի (6.4), ազատ մամուլի իրավունքի (6.3) և միավորվելու և

հավաքների իրավունքի (6.0) պաշտպանությանը:

Գծապարկեր Ը. Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության գնահատականները 1-ից մինչև 10 սանդղակում



Վիճակագրական նշանակալի տարբերություններ են գտնվել տղամարդկանց և կանանց պատասխանների միջև 14 իրավունքներից 8-ի դեպքում: Ընդ որում կանայք որոշակիորեն ավելի բարձր գնահատականներ են տվել, քան տղամարդիկ: Կանայք ավելի բարձր են գնահատել կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքի, արդար դատաքննության իրավունքի, ազատ և արդար ընտրություններին մասնակցելու իրավունքի, միավորվելու և հավաքների իրավունքի, ազատ մամուլի իրավունքի, կալանավորվածների և ձերբակալվածների իրավունքների, առողջության պահպանման իրավունքի և պետության կառավարման գործին մասնակցելու իրավունքի պաշտպանությունը¹⁹:

Գյուղական բնակիչները քաղաքային բնակիչների համեմատությամբ վիճակագրական տեսանկյունից նշանակալի բարձր գնահատականներ են տվել բոլոր իրավունք-

ների պաշտպանության մակարդակներին, բացառությամբ աշխատանքի, սոցիալական ապահովության, երեխաների պաշտպանության իրավունքների և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության: Մարզերի բնակիչները բոլոր իրավունքների պաշտպանությունն ավելի բարձր են գնահատել, քան Երևանի բնակիչները, բացառությամբ տղամարդկանց և կանանց իրավահավասարության և աշխատելու իրավունքի²⁰: Երիտասարդ հարցվածները բոլոր իրավունքների պաշտպանությանն ավելի ցածր գնահատականներ են տվել, քան տարեց հարցվածները, բացառությամբ երեխաների պաշտպանության իրավունքի, տղամարդկանց և կանանց իրավահավասարության և կրոնի ազատության իրավունքի: Իրականում կրոնի ազատության իրավունքը միակն է, որը տարեց հարցվածները գնահատել են ավելի բարձր, քան երիտասարդ հարցվածները²¹:

19. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քետը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:
 20. Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-քետը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:
 21. Պիրսոնի կոռելյացիոն վերլուծությամբ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

Հայաստանում մարդու իրավունքների խախտումները


Հարցվածների համար կրկին թվարկել են վերոհիշյալ 14 իրավունքները և խնդրել են պատասխանել, թե արդյոք իրենց կամ իրենց ընտանիքից որևէ մեկի իրավունքը խախտվե՞լ է վերջին երկու տարիների ընթացքում (տե՛ս Աղյուսակ 26): Գծապատկեր Թ-ում տրված են յուրաքանչյուր իրավունքի դրական պատասխանի արդյունքները՝ տոկոսներով:

Հարցվածների 40 տոկոսը նշել է, որ խախտվել է աշխատանքի իրավունքը (ուշագրավ է, որ այն հարցվածների 36 տոկոսը, ովքեր աշխատող ունեն իրենց ընտանիքում, և այն հարցվածների 45 տոկոսը, որոնց ընտանիքներում ոչ ոք չի աշխատում, պատասխանել են, որ աշխատանքի իրավունքը խախտվել է): Ըստ հարցվածների պատասխանների՝ մյուս երկու ամենից հաճախ խախտվող իրավունքներն են սոցիալական

ապահովության իրավունքը (34 տոկոս) և առողջության պահպանման իրավունքը (22 տոկոս):

Հարցվածների մոտ 18 տոկոսը նշել է, որ խախտվել է ազատ և արդար ընտրություններին մասնակցելու իրավունքը: 9 տոկոսը պատասխանել է, որ խախտվել է կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը: Եվս 9 տոկոսը նշել է, որ խախտվել է ազատ տեղաշարժվելու իրավունքը, 6 տոկոսը պատասխանել է, որ խախտվել է արդար դատաքննության իրավունքը, և ևս 6 տոկոսը նշել է, որ խախտվել է միավորվելու և հավաքների իրավունքը: Հարցվածների 5 տոկոսը նշել է, որ վերջին երկու տարիների ընթացքում խախտվել է տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը և 4 տոկոսը՝ պետության կառավարման գործին մասնակցելու իրավունքը:

Գծապատկեր Թ: Վերջին երկու տարիների ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերը



Հարցվածների նվազ քան 5 տոկոսը նշել է, որ երեխաների պաշտպանության (3 տոկոս), կրոնի ազատության (2 տոկոս), մամուլի

ազատության (2 տոկոս) և կալանավորվածների ու ձերբակալվածների (2 տոկոս) իրավունքները խախտվել են:

Մարդկանց թրաֆիկինգ

Հարցվածների համար կարդացել են հետևյալ նախադասությունը. «Ինչպես գիտեք, որոշ մարդիկ կարծում են, որ Հայաստանում թրաֆիկինգը հարածուն խնդիր է: Այս խնդրի լուծումներից մեկը պարտադիր կողմնորոշիչ դասընթացների կազմակերպումն է այն մարդկանց համար, ովքեր պատրաստվում են աշխատել արտասահմանում»:

Եվ խնդրել են հայտնել իրենց կարծիքը այդ լուծման վերաբերյալ (տե՛ս Աղյուսակ 28):

Հարցվածների կեսից մի փոքր ավելին (52 տոկոս) չի կարողացել պատասխանել այդ հարցին, քանի որ իրենք չգիտեն, թե ինչ է

նշանակում թրաֆիկինգ: (Հարցազրույց վարողները չպետք է պարզաբանում կամ բացատրություն տային այդ հարցին, որպեսզի հնարավոր լիներ պարզել, թե որքանով է հասկանալի այդ հարցը):

Հարցվածների մնացած 44 տոկոսի (առանց «չգիտեմ» պատասխանների) ճնշող մեծամասնությունը (89 տոկոս) համաձայնել է, որ պետք է կազմակերպվեն պարտադիր կողմնորոշիչ դասընթացներ այն մարդկանց համար, ովքեր պատրաստվում են աշխատել արտասահմանում:

Հիմնական արդյունքների ամփոփում

Այս բաժնում ամփոփված են Հայաստանում մարդու իրավունքների նկատմամբ վերաբերմունքի, գիտելիքի և վարքագծի վերա-

բերյալ հանրապետության ամբողջ տարածքում իրականացված հարցման հիմնական արդյունքները՝ ներկայացված զեկույցում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- ◆ Հայաստանի տասը քաղաքացիներից յոթն առնվազն «որոշ չափով հետաքրքրված են» Հայաստանում մարդու իրավունքների ընդհանուր հարցերով:
- ◆ Տասը քաղաքացիներից վեցը մարդու իրավունքների մասին տեղեկատվությունն ստանում են հեռուստատեսությունից, տասից երկուսը այդպիսի տեղեկատվության ոչ մի աղբյուր չունեն:
- ◆ Տեղեկատվությունը հեռուստատեսությունից ստացող քաղաքացիների կեսը հիմնվում է Հ1 պաշտոնական հանրային հեռուստաալիքի վրա: Մարզերի բնակիչները գրեթե երկու անգամ ավելի շատ են դիտում Հ1-ը, քան Երևանի բնակիչները:
- ◆ Տասը քաղաքացիներից չորսը չեն կարողացել պատասխանել այն հարցին, թե եթե տեղեկատվություն անհրաժեշտ լինի իրենց իրավունքների մասին, ապա որտեղից ձեռք կբերեն այն, հինգից մեկը պա-

տասխանել է, որ կդիմի իրավաբանի կամ դատարան:

- ◆ Քաղաքացիների գրեթե 50 տոկոսը պատասխանել է, որ ոչ մի տեղ չի դիմի կամ չգիտի, թե ուր դիմի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման դեպքում: 20 տոկոսը պատասխանել է, որ կդիմի իրավաբանի կամ դատարան, իսկ 18 տոկոսը՝ ոստիկանություն: Միայն 3 տոկոսն է պատասխանել, որ կդիմի մարդու իրավունքների պաշտպանին:
- ◆ Տասը քաղաքացիներից յոթը չեն կարողացել նշել, թե ուր կդիմեն, եթե խախտվի իրենց՝ կառավարությունից տեղեկատվություն ստանալու իրավունքը:
- ◆ Քաղաքացիների գրեթե 50 տոկոսը չի կարողացել պատասխանել, թե ուր կդիմի, եթե խախտվեն ընտրական իրավունքները: Գրեթե 25 տոկոսը պատասխանել է, որ կդիմի ընտրական հանձնաժողով, և մոտ

20 տոկոսը նշել է, որ կղիմի իրավաբանի կամ դատարան:

- ◆ Այնուամենայնիվ, երբ հարցվածներին խնդրել են գնահատել, թե որքանով են ի-

րենք տեղյակ Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի մասին, գրեթե 70 տոկոսը պատասխանել է, որ «որոշ չափով տեղյակ է»:

ԳԻՏԵԼԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

- ◆ Քաղաքացիների 16 տոկոսը կարողացել է նշել այն անձի անունը, որը նշանակվել է ղեկավարելու մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կամ նրա պաշտոնը: Այդ հարցին ճիշտ պատասխան տվողների թվում կանանց համեմատ ավելի մեծ տոկոս են կազմում տղամարդիկ, գյուղական բնակիչների համեմատ՝ քաղաքային բնակիչները:
- ◆ Մարդու իրավունքների պաշտպանի անունը կամ նրա պաշտոնը ճիշտ նշած տասը քաղաքացիներից չորսը չեն կարողացել նշել որևէ խնդիր, որի կապակցությամբ կարելի է դիմել մարդու իրավունքների պաշտպանին, իսկ մնացածը տվել են սխալ պատասխաններ:
- ◆ Քաղաքացիների միայն 3 տոկոսն է կարողացել ճիշտ նշել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ որպես մարդու իրավունքները համատարած բոլորի համար ամրագրող պաշտոնական փաստաթուղթ:
- ◆ Գրեթե բոլորը համարում են, որ կան որոշ իրավունքներ, որոնք երբեք որևէ պատճառով չպետք է սահմանափակվեն կառավարությունների կողմից, և մենք ունենք մարդու իրավունքներ, որովհետև դրանք բնական իրավունքներ են և պատկանում են բոլոր մարդկային էակներին: Սակայն հարցվածների միայն կեսն է համարում, որ

մենք ունենք մարդու իրավունքներ այն հանգամանքի շնորհիվ, որ դրանք մեզ տալիս են կառավարությունները:

- ◆ Այնուամենայնիվ հարցվածները աղոտ պատկերացում ունեին, թե ինչ է մարդու համընդհանուր ճանաչված իրավունքը: Գրեթե բոլոր հարցվածները համաձայնել են, որ առաջարկված ցանկում թվարկված բոլոր իրավունքները համընդհանուր ճանաչված մարդու իրավունքներ են, ընդհանին հարցվածների 96 տոկոսը կարծում է, որ ապահով ճանապարհներով երթևեկելը մարդու իրավունք է:
- ◆ Ցանկում նշված կրոնի ազատության իրավունքն ստացել է ամենաքիչ «այո» պատասխանները. տասը հարցվածներից յոթը համարում են, որ դա մարդու հանընդհանուր ճանաչված իրավունք է, որը պետք է ամենուրեք երաշխավորվի բոլոր մարդկանց համար:
